

ԸՆԿԵՐԱՅԻՆ

ԱՇԱԿԵՐՏԻՆ ՀԱՅՐԸ

Մեր միջավայրէն ներս ակնյայտ երեւոյթ է, որ երախաներու դպրոցական կեանքով հիմնականօրէն մայրերը կը զբաղին. ծնողական ժողովներու ներկայութիւն, տուէնէն ներս պարտականութիւններու հսկողութիւն հաւայն: Այս երեւոյթը անշուշտ կարելի է բացատրել եւ մասամբ արդարացնել հայրերու աշխատանքային ժամանակացոյցի պարտադրանքներով: Սակայն այս բացատրութիւնը յաճախ արգելք կը հանդիսանայ՝ արծարծելու աշակերտին կեանքէն ներս հօր իսկական ներկայութեան հարցը:

Հօր ներկայութիւնը երկու ձեւ կրնայ ունենալ. նախ՝ անոր ֆիզիքական ներկայութիւնը, երկրորդ՝ երախային ներաշխարհէն ներս անոր ներկայութիւնը: Ֆիզիքական ներկայութեան պարագան բացատրութեան չի կարօտիր: Երախայի ներաշխարհէ ներս անոր ներկայութիւնը, սակայն, հարց մըն է, որ նկատի պէտք է առնել եւ որուն համար մայրերը դերակատարութեան մեծ բաժին ունին:

Հայրը երախային համար կը ներկայացնէ օրէնքը, կամ աւելի շիտակ պիտի ըլլար ըսել՝ այն անձը, որուն միջոցաւ երախան կը ծանօթանայ օրէնքի գոյութեան: Սակայն, որպէսզի հայրը կարենայ տեղ գրաւել երախային ներաշխարհին մէջ, հարկ է, որ ան արժեւորուի մօր կողմէն: Կ'ուզենք շեշտը դնել երախային դպրոցական

կեանքէն ներս հօր ներկայութեան անհրաժեշտութեան վրայ եւ այս իմաստով՝ մօր դերակատարութեան վրայ:

Կարելի է անշուշտ ըսել, թէ՛ «այնքան ատեն, որ մայրը իսկապէս կը հետեւի երախային դասերուն, դպրոցական կեանքին, հօր բացակայութիւնը այս մարզէն ներս մեծ հարց մը չի ստեղծեր»: Սակայն այս հաստատումը վտանգաւոր է շարք մը պատճառներով:

Դպրոցական կեանքը՝ երախային համար մեծ նշանակութիւն ունի, քանի մը իմաստով: Նախ՝ դպրոցական կեանքի ընթացքին է, որ երախան կը սորվի ապրիլ ընկերային շրջանակի մէջ, երկրորդ՝ դպրոցական կեանքի երկար տեւողութիւնը, ծնողներու կողմէ անոր ընծայուած մեծ կարեւորութիւնը, երախային ներաշխարհին մէջ մեծ տեղ կու տան անոր: Հետեւաբար, գլխաւոր այս երեք կէտերուն է, որ երախային ծնողները պէտք է ուշադրութեամբ հետեւին:

Ընկերային շրջանակի մէջ կեանքը միշտ ալ հեզասահ չէ, նոյնիսկ երախային համար եւ անոր ընկերային շրջանակը դպրոցն է: Ան կրնայ ընկերներ ունենալ, ինչպէս նաեւ դասընկերներ՝ որոնք զինք կը նեղացնեն, ուսուցիչ-ուսուցչուհիներ, որոնք իրեն սիրելի են, իսկ ոմանք՝ զինք կը խրտչեցնեն: Կարեւոր է, որ երախան իր տունէն ներս առիթ ունենայ այս նիւթերուն մասին արտայայտուելու, իր զգացումները եւ

փորձառութիւնները պատմելու եւ անոր դիմաց ստանայ ծնողքին պատասխանը: Ընդհանրապէս հրախային մայրն է, որ «կը քաղէ» այս տեղեկութիւնները՝ ճաշի ընթացքին, երբ հայրը տակաւին գործէն վերադարձած չ'ըլլար: Եւ բնականաբար մայրն է, որ անհրաժեշտ բացատրութիւնները կու տայ (եւ պէտք է տայ) երախային: Սակայն այս բոլորին մէջ կը բացակայի հայրը, յաճախ երախան առիթ չ'ունենար անոր պատմելու իր դաստիարակչական կեանքի փոքր դէպքերը, որոնք թերեւս շատ մեծ նշանակութիւն չունին չափահասերուն համար, սակայն երախային աշխարհին մէջ իրենց տեղը ունին. այս պատճառով է, որ ան նաեւ պէտք ունի լսելու հօրը խօսքը, հօրը կարծիքը այս մասին, պարզապէս որովհետեւ հայրը, մօր կողքին, խէտլ անձնաւորութիւն մըն է երախային համար: Անոնց երկուքին խօսքերով է, որ երախան պիտի ձեւաւորէ դպրոցէն ներս իր կեցողութիւնները: Անշուշտ յստակ է, որ նախընտրելի պիտի ըլլար հայր եւ մայր զիրար չհակասեն, որպէսզի երախան չփոթի չըմատնուի: Այսպէս, լաւագոյն ձեւը պիտի ըլլար երեկոյեան «ընտանեկան» պահ մը ստեղծել, հայր, մայր եւ զաւակ(ներ), կարծիքներ փոխանակելու համար, ինչ որ երախային կու տայ ապահովութեան, պատկանելիութեան եւ արտայայտուելու ազատութեան անհրաժեշտ զգացումները:

Երկրորդ կէտը՝ գիտելիքներու պարագան է: Դասերով եւ պարտականութիւններով ծանրա-

բեռնուած՝ աշակերտ-երախան կը վերադառնայ տուն եւ ճաշելէ ետք կը պատրաստէ զանոնք: Դարձեալ մայրն է, որ ներկայութիւնն է, որովհետեւ հայրը աշխատանքի կ'ըլլայ:

Այս պահուն, մօր համար հիմնական դժուարութիւն կրնայ ըլլալ երախային ցրուածութիւնը, չկամութիւնը՝ կեդրոնանալու իր դասերուն վրայ: Եւ յաճախ, մայրը մասամբ հասկնալի, սակայն ապարդիւն կեցուածքի կը դիմէ՝ կը բարկանայ եւ միակ պահը, ուր հայրը իսկապէս կը յիշուի՝ այս պահն է, երբ մայրը կը սպառնայ՝ «երեկոյեան հօրդ պիտի պատմեմ», դժբախտաբար, այս ձեւը թէեւ կ'ապահովէ հօր ներկայութիւնը՝ երախային ներաշխարհէն ներս, սակայն ան կը վերածուի պարզապէս պատժող տիպարի մը, դատաւորի մը: Հայրը թէեւ հեղինակութեան ներկայացուցիչն է, սակայն հեղինակութիւնը պէտք է նոյնացնել պատիժներու անօրինումին հետ: Առաւել, ցրուած կամ չկամ երախան, երբ սպառնալիքով կը ստիպուի դաս սորվիլ, որեւէ օգուտ չի քաղեր իր սորվածէն: Ինչ կը վերաբերի հօր ներկայութեան, նախընտիրը է վերոյիշեալ սպառնալիքը փոխարինել հօր կողմէ եկող նախաձեռնութեամբ մը՝ իւրաքանչիւր երեկոյ հարցնել երախային իր պարտականութիւններուն մասին, ունեցած դժուարութիւններուն մասին եւ դարձեալ երեքով փորձել լուծել երախային հարցերը: Այս ձեւը կ'արտօնէ, որ երախան անդրադառնայ իր հիմնական դժուարութիւններուն եւ մանաւանդ մասնակցութիւն բերէ իրեն վերաբերող հարցերու լուծման մէջ:

Վերջին կէտը խորքին մէջ իր մէջ կը պարու-
նակէ առաջին երկուքը, մասնաւորաբար ծնողա-
կան կեցուածքին պարագային: Դպրոցական
կեանքը կը տեւէ շուրջ 18 տարի, յաճախ չենք
անդրադառնար, թէ ան որքան խոր ձեւով կրնայ
ազդել անհատի մը կազմաւորման վրայ: Պահ մը
եթէ՝ փորձենք վերյիշել մեր դպրոցական տարի-
քը, կրնանք յիշել, որ մեզի համար նոյնպէս
դպրոցական կեանքը անվերջանալի կը թուէր:
18 տարիներու ընթացքին երախայ մը կը դառ-
նայ պատանի, ապա երիտասարդ, որ պիտի դի-
մագրաւէ կեանքը: Այդ տարիներու ընթացքին
է, որ ան տունէն եւ դպրոցէն կը ստանայ ինք-
զինք հաստատելու անհրաժեշտ տուեալները:
Այս պատճառով, իր զաւակին հետ աւելի երկար
ժամանակ անցընող մայրը պէտք է նախանձա-
խընդիր ըլլայ, որ հայրը չբացակայի երախային
կեանքէն: Երախան գիտէ, թէ ծնողքին համար
իր դասերը մեծ կարեւորութիւն կը ներկայաց-
նեն: Ան այս մէկուն կ'անդրադառնայ հիմնա-
կանօրէն մօր խօսքերուն եւ կեցուածքներուն
ընդմէջէն: Հայրը ընդհանրապէս կեանքի այլ
երեսներով կը զբաղի: Սակայն եթէ նկատի ու-
նենանք վերոյիշեալ կէտերը, յստակ կը դառնայ
հօր ներկայութեան անհրաժեշտութիւնը՝ իբրեւ
օրէնքներու ծանօթացնող եւ այս իմաստով ա-
պահովութեան զգացում ներշնչող տիպար:

Այսպէս, հօր ֆիզիքական ներկայութեան չափ
նոյնքան կարեւոր է անոր ներկայութիւնը երա-
խային ներաշխարհէն ներս: Դպրոցական կեան-

քի պարագային, տրուած ըլլալով անոր ֆիզի-
քական ներկայութեան հասկնալի արգելքները,
մօր կը մնայ հաստատել անոր ներկայութիւնը
երախային ներաշխարհէն ներս, ստեղծելով խօ-
սակցութեան պահեր, երախային յիշեցնելով, թէ
տուեալ հարցում մը կրնայ նաեւ հօրը ուղղել եւ
հայրը տեղեակ պահել իր գաւկին դստրոցական
կիանքի անցուդարձներէն:

«Աշակերտին հայրը» խորագիրը կը կրէ այս
յօդուածը, սակայն անիկա խորքին մէջ կը շեշտէ
հօր ե՛ւ մօր, ծնողքին ներկայութեան անհրա-
ժեշտութիւնը, անոնց կեցուածքներու ներդաշ-
նակութիւնը եւ երախային հետ հաղորդակցու-
թեան կարեւորութիւնը: Այս տուեալները կ'ար-
տօնեն երախային, որ աշակերտի իր «մորթ»ին
մէջ հանգիստ զգայ, գիտակցելով, որ կայ վայր
մը, ուր ինք կրնայ արտայայտուիլ ու հասկըց-
ւիլ:

Թ. Ա.